ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 872-Ա

«27» օգոստոսի 2025 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1988 ԹՎԱԿԱՆԻ ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ ԿՈՐՑՐԱԾ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՕԹԵՎԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՆԻՆԱԿԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼ ԽԱՉԱՏՈՒՐ ՍՈՒՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, 605-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 57-Ա որոշումը որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Գյումրու խճուղի, 72-րդ շենքի, թիվ 6 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը (նախկին հասցեն՝ Լենինականյան խճուղի, 3-րդ շենք, թիվ 6 բնակարան) 60,61 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և շենքով զբաղեցված հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքով նվիրատվություն կատարել Խաչատուր Սուրենի Սարգսյանի ընտանիքի հետևյալ երկու անդամներին.

1) Սարգսյան Խաչատուր Սուրենի (ծնված 1977 թվականի մայիսի 10-ին), ինքը,

2) Ոսկերչյան Արմենուհի Միշայի (ծնված 1986 թվականի սեպտեմբերի 11-ին), կինը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանը դուրս գրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գույքացանկից:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները պետական գրանցման նպատակով ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«27» Օգոստոսի 2025թ.
Գյուղ Ախուրյան